Կարգապահական գործ թիվ ԿԳ-24157

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՄՈՒՇԵՂ ԳԱՌՆԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Մուշեղ Գառնիկի Վարդանյանի **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 2829) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության քննիչ Ա. Կարապետյանը **(այսուհետ նաև՝ Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ Պալատ),** հայտնել է, որ Մուշեղ Վարդանյանն անհարգալից վերաբերմունք է ցուցաբերել վարույթն իրականացնող մարմնի նկատմամբ, առանց թույլտվության դուրս է եկել հարցաքննության ժամանակ քննիչի աշխատասենյակից: Բացի այդ, հարկադրաբար ստիպել է ձերբակալվածին հրաժարվել վերջինիս մասնակցությամբ ցուցմունք տալ, մինչդեռ ձերբակալված Մաքսիմ Համբարձումյանը հայտնել է, որ չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, ուստի վարույթն իրականացնող մարմինը տվյալ տեղեկությունը ստանալուն պես միջոցներ է ձեռնարկել ձերբակալվածի իրավունքն օրենքով սահմանված կարգով պատշաճ ապահովելու ուղղությամբ:

Գրության մեջ նշվել է նաև, որ Մուշեղ Վարդանյանը չի ներկայանում կատարվելիք քննչական գործողություններին, որով պայմանավորված՝ խնդրել է ապահովել վերջինիս ներկայությունը, ինչպես նաև քննարկման առարկա դարձնել Մուշեղ Վարդանյանի վարքագիծը:

Թիվ ԿԳ-24157-2-Ա
23.10.2024թ.

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 09.08.2024 թվականին Դիմողին առաջարկվել է՝ **«Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)** 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն այդպիսիք չեն ներկայացվել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մուշեղ Վարդանյանը ՀՊԳ ղեկավարին ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ վարույթն իրականացնող մարմինը թույլ է տվել մի շարք խախտումներ, այդ թվում՝ սահմանափակել կոնֆիդենցիալ շփումն իր պաշտպանյալի հետ: Մասնավորապես, իր պաշտպանյալը չի ցանկացել իր ներկայությամբ ցուցմունք տալ, սակայն քննիչը սկսել է հարցաքննությունն այն պայմաններում, երբ դեռ Փաստաբանը ավարտած չի եղել խորհրդատվությունը:

Փաստաբանը նշել է, որ նման պայմաններում իր գործողություններն եղել են իրավաչափ և անհրաժեշտ:

Ինչ վերաբերվում է կատարվելիք քննչական գործողություններին, նշված ժամին չներկայանալուն, ապա այն պայմանավորված է եղել աշխատանքային ծանրաբեռնվածությամբ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 09.08.2024 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն այդպիսիք չեն ներկայացվել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 04.07.2024թ. թիվ 226-Ա/ԿԳ-24157 որոշման հիման վրա փաստաբան Մուշեղ Վարդանյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 6.1.1 և 6.1.3 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

11.07.2024թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 11.09.2024թ. կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 11.09.2024թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 23.10.2024թ. ժամը 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Մուշեղ Վարդանյանը հանդիսացել է թիվ 45101524 քրեական վարույթի շրջանակներում ձերբակալված՝ Մաքսիմ Համբարձումյանի պաշտպանը: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ:*

2. Փաստաբանը 04.06.2024թ տեղի ունեցած հարցաքննության ընթացքում դուրս է եկել քննիչի աշխատասենյակից՝ առանց վերջինիս թույլտվության: *Սույն փաստը չի վիճարկվել:*

3. Մուշեղ Վարդանյանի պաշտպանյալը չի տիրապետել հայերենին: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ և գործում առկա է թարգմանչի մասնակցության վերաբերյալ ապացույց:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Մուշեղ Վարդանյանը փաստաբան է հանդիսանում 05.08.2020 թվականից, և 2020-2024թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Մուշեղ Վարդանյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 6.1.1 ենթակետի պահանջների խախտման համար, իսկ կանոնագրքի 6.1.3 ենթակետի մասով ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 6.1.1-րդ ենթակետի համաձայն՝ Վստահորդի շահերը մինչդատական վարույթում ներկայացնելու ընթացքում փաստաբանի գործողությունները պետք է համապատասխանեն քրեական դատավարության օրենսգրքի և Օրենքի պահանջներին:

Իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 6.1.1-րդ ենթակետը վկայակոչող (բլանկետային) է, քանի որ հղում է կատարում փաստաբանի և վարույթն իրականացնող մարմնի փոխհարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին, որի 49-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ և 3-րդ

կետերի համաձայն՝ պաշտպանը պարտավոր է՝ մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալու վարույթն իրականացնող մարմնի հրավերով և ենթարկվելու վարույթն իրականացնող մարմնի կարգադրություններին և դատական նիստի կարգին:

Սույն կարգապահական գործում առկա տվյալներից հետևում է, որ փաստաբան Մուշեղ Վարդանյանը, հանդիսանալով թիվ 45101524 քրեական վարույթի շրջանակներում ձերբակալված Մաքսիմ Համբարձումյանի պաշտպանը, 04.06.2024թ. տեղի ունեցած հարցաքննության ընթացքում դուրս է եկել քննիչի աշխատասենյակից՝ առանց վերջինիս թույլտվության և առանց այլ հարգելի ու թույլատրելի պատճառի առկայության:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-ր մասի 2-րդ կետի համաձայն՝ *վարույթն իրականացնող մարմինը չի ընդունում պաշտպանից մեղադրյալի հրաժարվելը կամ անհապաղ միջոցներ է ձեռնարկում վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար, եթե՝ մեղադրյալը չի տիրապետում կամ ոչ բավարար չափով է տիրապետում հայերենին:*

Գործում առկա փաստերից հետևում է, որ Մուշեղ Վարդանյանի պաշտպանյալը չի տիրապետել հայերեն լեզվին, քանի որ ներգրավված է եղել թարգմանիչ: Նման պայմաններում, Փաստաբանն ոչ միայն իրավունք չուներ լքել քննիչի աշխատասենյակը, այլ նաև նման միջնորդությամբ հանդես գալու դեպքում քննիչն իրավունք չուներ թույլ տալու, որ Փաստաբանը չմասնակցեր քննչական գործողությանը՝ հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը:

Փաստաբանն իր բացատրության մեջ անդրադարձել է քննիչի գործողություններին. ըստ նրա՝ քննիչը խոչընդոտել է պաշտպանյալի հետ կոնֆիդենցիալ խորհրդատվություն իրականացնելու իրավունքի իրականացմանը, ինչպես նաև անդրադարձել է քննիչի կողմից իր պաշտպանյալին ձեռնաշղթա հագցնելուն, սակայն վերոգրյալը հավաստող կամ հերքող որևէ ապացույց կողմերը չեն ներկայացրել:

Մինչդեռ, Փաստաբանի բացատրությունից հետևում է, որ վերջինս չի հերքել քննչական գործողություններից առանց քննիչի թույլտվության և առանց այլ հարգելի ու թույլատրելի պատճառի հեռանալու հանգամանքը, ինչը Հանձնաժողովը գնահատում է որպես Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Կանոնագրքի 6.1.1. ենթակետի խախտում:

Անրադառնալով փաստաբան Մուշեղ Վարդանյանի կողմից 05.06.2024թ. ժամը 10:00-ին, այնուհետև նույն օրը, ժամը՝ 15:00-ին ձերբակալված Մաքսիմ Համբարձումյանին մեղադրանք առաջադրելու և հարցաքննության քննչական գործողությանը չներկայանալուն՝ հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծանուցագիրը հանձնվում է վարութային գործողության կամ դատական նիստի օրվանից ոչ ուշ, քան երկու օր առաջ: **Եթե վարութային գործողությունը կամ դատական նիստը ծրագրված չէ, կամ դատալսումները չեն կարող հետաձգվել, ապա ծանուցագիրը կարող է հանձնվել ներկայանալու նախորդ օրը կամ ներկայանալուց անմիջապես առաջ՝ դրանում նշելով ծանուցագիրն ուշ հանձնելու պատճառը:**

Սույն դեպքում Փաստաբանը ներկայացրել է 05.06.2024թ. ժամը 00:10-ին, այնուհետև՝ ժամը 13:19-ին իր էլեկտրոնային էջից տպված նամակագրություն՝ հղված mvlawyer23@gmail.com էլեկտրոնային հասցեի օգտատիրոջը, որով

arusyak.karapetyan@Investigative.am էլեկտրոնային հասցեի օգտատերն վերջինիս ուղարկել է ծանուցագիր:

Հանձնաժողովը նախ արձանագրում է, որ Փաստաբանը պարտավոր չէ ժամը 00:10-ին (աշխատանքային օրվա ավարտից հետո) հետևել իր էլեկտրոնային հասցեին:

Ինչ վերաբերում է 15:00-ին քննչական գործողություններին չներկայանալու հանգամանքին, ապա հարկ է նշել, որ ծանուցագիրն ուղարկվել է նույն օրը ժամը 13:19-ին, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն չի կարող դիտարկվել որպես պատշաճ ծանուցում, որին հասցեատիրոջ դրական չարձագանքելը կհամարվեր խախտում: Բացի այդ Փաստաբանը պնդել է, որ նույն օրը և նույն ժամին ունեցել է մեկ այլ դատական նիստ:

Վերոգրյալ իրավիճակում Հանձնաժողովը Փաստաբանի վարքագիծը գնահատելիս հաշվի է առնում այն հանգամանքը, որ վարույթ իրականացնող մարմնի կողմից ծանուցագիրը հանձնվել է քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելու նույն օրը, իսկ դրանում բացակայում է ծանուցագիրն ավելի վաղ չհանձնելու պատճառների վերաբերյալ հիմնավորումներ:

Այսպիսով, քննչական գործողություններին չներկայանալու մասով Հանձնաժողովն արձանագրում է, որ Դիմողի կողմից չի ներկայացվել թույլատրելի ապացույց առ այն, որ Փաստաբանը պատշաճ ծանուցված լինելու պայմաններում պարբերաբար չի մասնակցել քննչական գործողություններին և թույլ է տվել կարգապահական խախտում:

Ինչ վերաբերվում է Կանոնագրքի 6.1.3-րդ ենթակետին, ապա մինչդատական վարույթում փաստաբանը պարտավոր է հարգանքով վերաբերվել դատավարության մասնակիցներին և մնալ կոռեկտության շրջանակներում, իսկ դատավարության մասնակիցների (մեղադրող կողմի և այլն) գործողություններին կամ ոչ կոռեկտ արտահայտություններին անդրադառնալ օրենքով սահմանված եղանակներով՝ դիմումների, հայտարարությունների, միջնորդությունների, բացարկների, առարկությունների կամ բողոքների միջոցով:

Վերոնշյալ ենթակետերով փաստաբանի վրա դրվում է պարտավորություն հարգանքով վերաբերվել դատավարության մասնակիցներին և մնալ կոռեկտության շրջանակներում:

Հանձնաժողովը գտնում է, որ Դիմողի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց, որով կհիմնավորվեր Փաստաբանի կողմից անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու կամ կոռեկտության շրջանակներից դուրս գալու վարքագիծը, ինչպես նաև առկա չեն այլ փաստեր և ապացույցներ, որոնք կարող էին վկայել Փաստաբանի կողմից Կանոնագրքի 6.1.3 ենթակետի խախտում թույլ տրվելու մասին:

Ամփոփելով՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի կողմից քննչական գործողություններից առանց քննիչի թույլտվության և առանց այլ հարգելի ու թույլատրելի պատճառի հեռանալու վարքագիծը հանդիսանում է Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 6.1.1. ենթակետի խախտում, իսկ այլ մասերով Փաստաբանի վարքագծում կարգապահական խախտման առկայությունը Հանձնաժողովը հաստատված չի համարում:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը:

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) ***լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.***

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է, որը դրսևորվում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված կարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթի իրականացման մեջ:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ այն հանգամանքը, որ Փաստաբանը 2020-2024թթ ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ, ուստի սույն կարգապահական գործով Փաստաբանի նկատմամբ պետք է կիրառել

ամենամեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Միաժամանակ, հետագայում նմանատիպ իրավիճակները կանխարգելելու նպատակով Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Փաստաբանի նկատմամբ որպես լրացուցիչ տույժ կիրառել «վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ պետք է կիրառել «նկատողություն», ինչպես նաև՝ որպես լրացուցիչ կարգապահական տույժ՝ «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել» տույժի տեսակները:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետի, 3-րդ մասի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Մուշեղ Գառնիկի Վարդանյանի (արտոնագիր՝ թիվ 2829) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ «պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն»՝ վեց ամսվա ընթացքում «Դեոնթոլոգիա» թեմայով 4 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 6.1.1 ենթակետի պահանջների՝ սույն որոշմամբ արձանագրված խախտման համար:

2. Փաստաբան Մուշեղ Գառնիկի Վարդանյանի (արտոնագիր՝ թիվ 2829) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը՝ Կանոնագրքի 6.1.3 ենթակետի խախտման մասով, կարճել:

3. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-24157-2-Ա
23 հոկտեմբերի 2024թ.
ք.Երևան